

**«ԼՂՀ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ  
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով  
15-18 սեպտեմբերի 2016թ.  
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

**ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ**

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР  
(АРЦАХА):  
ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»**

международная молодёжная конференция  
15-18 сентября 2016г.  
Арцах (НКР), г.Степанакерт

**СБОРНИК МАТЕРИАЛОВ**

ԱԵԳՄՄ-ՕՄՍԱ  
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ  
2016

*Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց  
համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ  
Рекомендовано к публикации решением Ученого совета  
Университета Месроп Маштоц г.Степанакерта*

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400  
L 657

### **Խմբագրական խորհուրդ**

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Սանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Յ.Մ.Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդե**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մ.Մ.Սարգսյան**, ք.գ.դ. **Ս.Ս.Մինասյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Բաղդասարյան**, ք.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Հայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Հարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Սանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

### **Редакционная коллегия**

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **А.С.Манасян**, д.п.н., проф. **Г.М.Аванесян**, д.и.н., проф. **В.Р.Балаян**, д.ю.н. **В.В.Груздев**, д.ю.н., проф. **А.Г.Хачатрян**, д.п.н., проф. **М.М.Маргарян**, д.п.н. **С.М.Минасян**, д.э.н., проф. **Г.Л.Саргсян**, к.и.н., доц. **Н.Э.Багдасарян**, к.п.н., доц. **Х.С.Галстян**, к.э.н., доц. **Е.Р.Айриян**, к.ю.н. **А.Г.Арутюнян**, к.ю.н., доц. **А.А.Манасян**, к.ю.н., доц. **С.Г.Петикян**

L 657 «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածուում ներառված են «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերը:

В сборнике включены материалы международной молодежной научной конференции «25-летие государственности НКР (Арцах): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06  
ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և  
մասնագետների միավորում, 2016

**ՊԱՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ  
СЕКЦИЯ ИСТОРИИ**

**ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՂԱՐԱՔԱԴՅԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՆ  
ԳԻՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ 1813-1917ԹԹ.**

**ՆԵԼԻ ԲԱՂՎԱՍԱՐՅԱՆ**

*Արցախի պետական համալսարան*

*պ.գ.թ., դոցենտ*

[nelliohanjanyan@yandex.ru](mailto:nelliohanjanyan@yandex.ru)

19-րդ դարասկիզբը ցարական Ռուսաստանի անդրկովկասյան քաղաքականության համար նշանավորվում է նոր պատերազմներով, որոնցից 1804-1813 թթ. տեղի ունեցած ռուս-պարսկական պատերազմը վճռորոշ դեր է ունենում Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայության մի հատվածի՝ Ղարաբաղի<sup>1</sup> հայության կյանքում: 1805 թ. մայիսի 14-ին Զյուրակչայ (Կուրակ) գետի ափին կնքված դաշնագրով Ղարաբաղը միացվում է Ռուսաստանին: 1813 թ. հոկտեմբերի 12-ին Ղարաբաղի Գյուլիստան բերդավանում կնքված ռուս-պարսկական պայմանագիրը նշանավորում է ռուսական զենքի հաղթանակը, պայմանագրով իրավաբանական ամրագրում է ստանում նաև Զյուրակչայի դաշնագիրը<sup>2</sup>:

Պատմագիտությունը Գյուլիստանի պայմանագրի նշանակությունը դիտարկել է Անդրկովկասի Ռուսաստանին միացման համատեքստում՝ տարբեր գնահատականներ տալով քաղաքական այս ակտին՝ առաջադիմականից մինչև «չարյաց փոքրագույնը»: Պատմական օրինաչափության միայն հետամնաց մի տիրապետության փոխարինումը համեմատաբար զարգացած մեկ այլ տիրապետությամբ, այսինքն՝ նվազ զարգացած աստիճանի բացատրումը համեմատաբար զարգացած աստիճանով պետք է առաջադիմական համարել: Սակայն օրինաչափություններից բացի գոյություն ունեն նաև պատմական փաստերի գնահատման չափանիշներ, ինչը թույլ է տալիս մեզ հակվել այն կարծիքին, որ Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղի միացումը Ռուսաստանին «չարյաց նվազագույնն էր»: Իրականում սա այնքան էլ խիստ կամ ծայրահեղ որակում չէ, իմաստաբանությունը շատ հստակ է. երբեք օտարի տիրապետությունը չի

<sup>1</sup> Նշված ժամանակաշրջանի աղբյուրներում ուսումնասիրվող վարչաքաղաքական միավորը հիշատակվում է «Ղարաբաղ» ձևով, ինչը և հիմք է տվել հոդվածում առավել շատ օգտագործել վերոհիշյալ տեղանունը:

<sup>2</sup> **Բաղդասարյան Ն.**, Վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը Ղարաբաղում 1813-1867 թթ., Երևան, 2015, էջ 21:

կարող բացարձակ բարիք լինել, իսկ տվյալ դեպքում ռուսական տիրապետությունը պարսկական տիրապետության համեմատությամբ «չարիքներից նվազագույնն» էր, պատմական իրադարձությունների զարգացման արդյունքում ձևավորված նոր, անխուսափելի փուլ՝ իր ունեցած դրական ու բացասական հետևանքներով:

Ղարաբաղի քաղաքական պատմության մեջ պայմանագրի հետևանքների ընդհանրականը հետևյալն է. Ղարաբաղի ժողովուրդը ստացավ խաղաղ գոյատևման հնարավորություն: Հետամնաց պարսկական տիրապետությունը փոխարինվեց համեմատաբար զարգացած ռուսական տիրապետությամբ: Որոշակիորեն պաշտպանված լինելով ռուսական գեներով և օրենսդրությամբ՝ երկրամասը վերածվել էր հանգիստ և ապահով անկյունի: Գյուլիստանի պայմանագրի հետևանքով ստեղծված համեմատաբար բնականոն կենսապայմանները բավարար հիմք հանդիսացան, որպեսզի ծավալվեր պատերազմի հետևանքով հեռացած Ղարաբաղի բնակչության հայրենադարձություն: Ընդհանրական հետևանքներից գատ Գյուլիստանի պայմանագրի հետևանքների մանրամասն և օբյեկտիվ քննությունը թույլ է տալիս պայմանագիրը դիտարկել իր ունեցած դրական, բացասական կամ հանգուցալուծում չստացած հետևանքներով և պատմական փաստերի վերլուծության արդյունքում տալ պայմանագրի գնահատականը:

ա/ Ռուս-պարսկական պատերազմը և Գյուլիստանի պայմանագիրը ոչ միայն վերջ չտվեցին սահմանային վեճերին, այլև ավելի բորբոքեցին երկու երկրների միջպետական հարաբերությունները: Սահմանային տարածայնությունների շարքում բազմիցս շահարկվում էր որոշ տարածքների, այդ թվում՝ Ղարաբաղի՝ Պարսկաստանին վերադարձման հարցը:

1816 թ. հուլիսի 29-ին, Վրաստանի ռուսական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Ա. Երմոլովին ուղղված հրահանգում Ալեքսանդր 1-ինը նշում էր, որ պարսիկները պահանջել են վերադարձնել գրաված բոլոր տարածքները կամ իրենց զիջել որոշ մարզեր՝ դրամական փոխհատուցման դիմաց «...Պարսկական արքունիքի ցանկությունները բոլոր առումներով կբավարարվեն, եթե մեր գրաված տարածքներից ետ վերադարձնենք Թալիշի, Ղարաբաղի և Գանձակի խանությունները»<sup>1</sup>: Նրա խոսքերով՝ «հնարավոր չէ արդյո՞ք Թալիշի և Ղարաբաղի խանություններով միջոցներ գտնել պարսիկներին բավարարելու համար»: Կայսրն ավելացնում էր, որ «առավել շահավետ կլիներ մեր կողմից Արաքսի այն կողմում ձեռք բերված հողերը փոխանակել Երևանի և Նախիջևանի հետ...»<sup>2</sup>: Հոդվածի ընձեռած սեղմ հնարավորությունների պատճառով մանրամասները մի կողմ թողնելով՝ արձանագրում ենք միայն այն փաստը, որ Պարսկաստանի տիրապետությունից Ռուսաստանի հովանու տակ անցած Ղարաբաղը սոսկ տարածք էր, խաղաքարտ, որը կարելի էր

<sup>1</sup> АКАК, т. VI, ч. II, Тифлис, 1875, док. 267, с. 122.

<sup>2</sup> Присоединение Восточной Армении к России, сборник документов, т. II, Ереван, 1978, с. 23.

փոխանակել մեկ այլ տարածքով, կամ հետաքրքիր է իմանալ, որ ցարը հստակ պատկերացում չուներ իր տիրապետության տակ գտնվող տարածքների ռազմավարական նշանակության մասին: Իսկ տեղում Ռուսաստանի այսրկովկասյան քաղաքականությունն համակարգող և ուղղորդող Կովկասի կառավարչապետ Ա. Երմոլովը՝ /համակարծրությամբ փոխկուսակալ Վեյլամինովի/ գտնում էր, որ Ղարաբաղի գիջումը Պարսկաստանին կնշանակեր նրա հետ մեկտեղ գիջել նաև Թիֆլիսը, ինչն անհեռանկարային է<sup>1</sup> : Ղարաբաղի և մի քանի այլ տարածքների գիջման «գործարքը» չկայացավ՝ շնորհիվ այս գործում շահագրգիռ կողմի՝ Ա. Երմոլովի:

Բ/ 18-րդ դարի կեսին և վերջին տեղի ունեցած քաղաքական աննպաստ հայտնի զարգացումների հետևանքով Արցախի մելիքական տները թուլացել էին: Չնայած սպասումներին՝ Գյուլիստանի պայմանագրի կնքումից հետո Ղարաբաղի մելիքների ժառանգական իրավունքները շարունակեցին թուլանալ, որին հակառակ՝ բարձրացավ խանական ընտանիքի դերակատարությունը: Հանուն ճշմարտության պետք է ասել, որ ի սկզբանե ցարական կառավարությունը հույսեր չէր էլ ներշնչում հայ երևելիներին, պարզապես հայկական կողմն իր ավանդական ռուսամետ դիրքորոշման և գործելակերպի դիմաց որոշակի ակնկալիքներ, այնուամենայնիվ, ուներ: Հատկանշական է սակայն այն փաստը, որ մելիքական տների մայրամուտին, ինչպես նաև ցարական իշխանությունների կողմից մելիքական կարգին և մելիքների ինքնուրույնությանը վերջ տալու ձեռնարկումներին զուգահեռ՝ չգրված օրենքով նրանք շարունակում էին մնալ իրենց կավվածքների ինքնիշխան տերը՝ հոգալով հպատակների բարեկեցության մասին<sup>2</sup>:

Փաստորեն, պայմանագիրը հուսախաբ արեց հայ առաջադեմ հասարակությանը, ովքեր մեծ հույսեր էին կապել ռուսական տիրապետության հետ՝ համարելով, որ այդուհետ կվերականգնվի Ղարաբաղի մելիքների Նախկին փառքն ու հզորությունը: Սակայն իրականում տեղի էր ունեցել հակառակը. մելիքական կարգի վերականգնման մեջ տեսնելով ապագա անկախ պետականության սաղմերը և երկյուղ կրելով դրանից՝ ցարիզմը պահպանեց խանական խամաճիկային վարչակարգը, ինչը վերացվեց միայն այն պահին, երբ կայսրությունն իրեն բավականաչափ ապահով էր զգում հպատակ տիրույթներում: Ավելին՝ ցարիզմն այս վարչակարգի մեջ ամուր հենարան տեսավ իր գաղութային քաղաքականությունը ծավալելու Նախկին փոլում: 1822 թ. Ղարաբաղում վերջ է դրվում դեռ Նախորդ դարի կեսերին սկիզբ դրված՝ հայ իրականությանը խորթ խանական կառավարմանը: Խանական վարչակարգին փոխարինելու եկած ռուսական վարչակարգի գլխավոր խնդիրը Ղարաբաղի գաղութացումն էր:

դ/ Ինքնակալության՝ Ղարաբաղի նկատմամբ իրականացված վարչաքաղաքականության լուսաբանումը խիստ կարևոր և էական է ինչպես

<sup>1</sup> АКАК, т. VI, ч. II, док. 364, с. 194.

<sup>2</sup> Այս մասին տե՛ս ՅԱԱ, ֆ. 319, ց. 2, գ. 50, թ. 1-2, գ. 1, գ. 51, թ. 1-3, գ. 1, գ. 52, թ. 1-3, գ. 1, գ. 49, թ. 1-4, գ. 1, գ. 54, թ. 1-13:

հետգյուլիստանյան ժամանակաշրջանը գնահատելու, այնպես էլ պատմական պատգամների իմաստով: Ղարաբաղն առանձին վարչաքաղաքական և իրավասուբյեկտային միավորի կարգավիճակով անցավ Ռուսաստանին: Ինչպես ներկայիս Ադրբեջանը կազմող տարածքները, Ղաղստանը և Վրաստանը: Սակայն ցարիզմի վարչական քաղաքականության արդյունքում ստեղծվում է բոլորովին այլ իրավիճակ, ինչն այսօր մեծապես շահարկվում է ադրբեջանական պատմագիտության կողմից, Մասնավորապես՝ շահարկվում է ցարական կառավարության կողմից Ղարաբաղի գավառի արհեստական մոտքագրման փաստը, այսպես կոչված «մահմեդական գավառների» շարք: Իրականում անվան որոշման համար հիմք է ընդունվել ո՛չ պատմական, ո՛չ ազգագրական բաժանման, և ո՛չ էլ առավել ևս՝ էթնիկական նմանությունների սկզբունքը, այլ ուղղակի իրականացվել է աշխարհագրական բաժանման սինթեզ՝ գուգահեռվելով կառավարման հարմարության սկզբունքին, ինչի արդյունքում «մահմեդական գավառների» մեջ արհեստականորեն մտցվել էր Ղարաբաղի գավառը: Կառավարման հարմարության, միայն աշխարհագրական գործոններով առաջնորդվելու սկզբունքը, էթնիկ կենտրոնացումներից խուսափելու ցարական ավանդական քաղաքականության կրողն ու զոհը տվյալ դեպքում Ղարաբաղն էր: 1813-1917 թթ. ռուսական կայսրության վարչաքաղաքական բարեփոխումների նախագծերում՝ 1828 թվականի Պ. Սանկովսկու, 1829 թ. ռուսական կայսրության ֆինանսների նախարար Ե. Կանկրինի, 1830 թ. Ի. Պասկևիչի, 1834 թ. ռազմական նախարար Ա. Չերնիշևի, Ղարաբաղը մշտապես հանդես էր գալիս այս կամ այն վարչաքաղաքական միավորի կազմում, բայց ոչ երբեք Հայկական մարզի հետ մեկ վարչական միավորի ներսում<sup>1</sup>:

Անիրաժեշտ ենք համարում ծավալվել, հավանաբար, միակ նախագծի հարցում, որի արդյունքն էականորեն կտարբերվեր վերոնշյալներից: 1838թ. մայիսի 19-ին Անդրկովկասյան կոմիտեի սենատոր Պ. Գանը Կովկասի կառավարչապետին ներկայացրեց «Անդրկովկասի կառավարման կանոնադրությունը» ինչը կառավարչապետ Ե. Գոլովինի կողմից վերջնականորեն հաստատվեց 1838 թ. օգոստոսին: Ծրագրի վերամշակման աշխատանքների ժամանակ գաղափար հղացավ, բացի Վրացա-Իմերեթական նահանգից և Կասպիական մարզից, կազմավորել մեկ նահանգ ևս՝ Հայկական մարզի և Ղարաբաղի գավառի միավորման ճանապարհով: Գաղափարի հեղինակն էր ցարական աստիճանավոր Չիչագովը: Սակայն 2 նահանգների համար աստիճանավորների նախատեսվող քանակի անբավարարությունը, ճմեռային հաղորդակցության դժվարությունները, կառավարման համակարգի ծախսերի մեծացումը, երրորդ նահանգի ստեղծումը վերապահեցին կառավարությանը: Առաջ քաշված ծրագիրն այդպես էլ չընթացավորվեց և, դժբախտաբար, մնաց թղթի վրա<sup>2</sup>:

<sup>1</sup> **Բաղդասարյան Ն.**, նշվ. աշխ., էջ 97-100:

<sup>2</sup> **Тунян В.**, Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., Ереван, 2003, с. 63.

1840 թ. ապրիլի 10-ի վարչաքաղաքական բաժանմամբ Ղարաբաղը՝ «Շուշիի ուեզդ» վերանվանումով, այդուհետ գտնվելու էր Բաքվի, Շամախիի, Ղուբայի, Դերբենդի, Լենքորանի, Սուխիի կողքին՝ Կասպիական մարզի կազմում<sup>1</sup>: 1846 թ. դեկտեմբերի 14-ին ցարական կառավարությունը Անդրկովկասը նոր վարչական բաժանման է ենթարկում. Չանգեզուրն ու Ղարաբաղը՝ Շուշի վարչական կենտրոնով մտնում են Շամախի նահանգի<sup>2</sup>, իսկ 1859 թ. դեկտեմբերի 6-ից՝ Բաքվի նահանգի մեջ<sup>3</sup>: Մինչև 19-րդ դարի 60-ական թթ. առաջին կեսը Ղարաբաղի վարչատարածքային բաժանման վերաբերյալ ոչ մի փոփոխություն չի արձանագրվում: Այն կրկին քննարկման հարց դարձավ 1860-ական թթ. երկրորդ կեսին, երբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Շուշիի գավառն զբաղեցնում էր մոտավորապես 20 հազ. քառ. կմ տարածք՝ 254 հազ. բնակչությամբ, որոշվեց առանձնացնել նրա կազմում գտնվող Չանգեզուրը և առանձին-առանձին մտցնել 1867 թ. դեկտեմբերի 9-ին՝ ստեղծված Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ<sup>4</sup>: 1868 թ. Ելիզավետպոլի նահանգի կենտրոն ճանաչվեց Գանձակը, որն իր բնակչության թվով և քաղաքին բնորոշ մյուս գծերով զիջում էր Շուշիին:

Գնահատելով ցարական կառավարության վարչաքաղաքական ևս-խազձերի և որոշումների եռությունը՝ եզրահանգում ենք.

Ցարիզմը հավատարիմ էր մնացել էթնիկ կենտրոնացումներից խուսափելու իր քաղաքականությանը. այն ցայտուն կերպով արտահայտվել էր Ղարաբաղում, որտեղ շարունակում էր ապրել անկախ պետականության կերտման հույսը: Նախագծերում առաջ քաշված եզակի առաջարկները Ղարաբաղը և Հայկական մարզը մեկ վարչաքաղաքական միավորի մեջ միավորելու մասին այդպես էլ մնում էին թղթի վրա՝ պատճառաբանվելով սոսկ աշխարհագրական նկատառումներով: Փաստորեն, ցարական իշխանությունները ելնելով իրենց նեղ շահախնդիր քաղաքականությունից՝ Ղարաբաղը և Հայկական մարզը չմիավորեցին մեկ վարչական միավորի մեջ:

Ե/ Յետգյուլիստանյան պատմաշրջանի քաղաքական հետևանքների ետևախորքին տիրապետելու համար խիստ կարևոր է ներկայացնել նաև ցարիզմի վարած տեղական ինքնակառավարման քաղաքականությունը: Ցարիզմը Ղարաբաղում վարում էր բավականին հետաքրքիր քաղաքականություն. հովանավորելով մահմեդական «բարձր դասին»՝ միևնույն ժամանակ տեղական ինքնակառավարման կարևոր պաշտոններում նշանակում էր հայերին<sup>5</sup>:

<sup>1</sup> Шахатуни А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 86-87.

<sup>2</sup> «Кавказский календарь» на 1849 г., Тифлис, 1848, с. 37-40.

<sup>3</sup> «Մեղու Հայաստանի», թիվ 316, 1860, էջ 17:

<sup>4</sup> Отчет по главному управлению наместника Кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем е.и.в. князем Михаилом Николаевичем с декабря 1862-6 декабря 1872, Тифлис, 1873, с. 50.

<sup>5</sup> Հարցի շուրջ առավել մասնրամասն տե՛ս Բաղդասարյան Ն., նշվ. աշխ., էջ 106-114:

զ/ Յատկանշական է նաև այն փաստը, որ եթե 1813-1867 թթ. ընդգրկող պատմաշրջանում ռուսական աղբյուրներում Ղարաբաղի մասին տեղեկությունները այս կամ այն կերպ առանձնացված են, ապա դրան հաջորդող 1867-1917 թթ. ընդգրկող ժամականաշրջանում բախվում ենք այն իրողությանը, որ, փաստորեն, Ղարաբաղի գավառի մասին տվյալները շատ հաճախ տարրալուծված են ընդհանուր Ելիզավետպոլի նահանգ վարչաքաղաքական միավորի մասին տեղեկություններում: Սա հերթական ապացույցն է ցարական կառավարության կայսերապետական՝ էթնիկ կենտրոնացումներից խուսափելու քաղաքականության: Փաստորեն արհեստականորեն առանձնացնելով 1867-1917 թթ.՝ որպես ինքնակալության կողմից հպատակ տիրույթներում իրականացված քաղաքականության երկրորդ փուլ բախվում ենք այն իրողությանը, որ ցարիզմն արտաքին միատարրության քող էր նետել «Ելիզավետպոլի նահանգ» վարչաքաղաքական միավորի էթնիկ ներքին բազմատարրությանը: Հետևաբար մեր գերխնդիրն է պրպտումների միջոցով առկա աղբյուրագիտական և պատմագիտական նյութի թնջուկում առանձնացնել սեփականն ու ազգայինը:

Յատկանշական է, որ 1867 թ. Անդրկովկասի հերթական վարչաքաղաքական բաժանումից հետո ցարիզմի ուշադրության գլխավոր ուղղություններից էր ներքին կառավարման առումով բարեկարգ երկրամաս ունենալը: Այս իրավիճակը շարունակվում է մինչև 1917 թ. ցարական կարգերի վերացումը:

Հավելենք նաև, որ վերոնշյալ շրջադարձային պատմաշրջանի ուսումնասիրությունը խիստ կարևոր և արդիական է պատմական դասերի, ինչպես նաև՝ անկողմնակալ դիրքերից այն արդի քաղաքական գործընթացներին ծառայեցնելու առումով:

### **Նելլի Բաղդասարյան**

#### **ՌՈՒՄԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՂԱՐԱՔԱԳՅԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ 1813-1917 ԹԹ.**

**Բանալի բառեր՝** *Գյուլիստանի պայմանագիր, Ղարաբաղ, Ռուսաստան, ցարիզմ, Անդրկովկաս, վարչաքաղաքականություն, Ելիզավետպոլի նահանգ*

Հոգվածում է լուսաբանվել է ցարական կառավարության քաղաքականությունը 1813-1917 թթ. և արվել են հետևյալ եզրահանգումները. ցարիզմը հավատարիմ էր մնացել էթնիկ ապակենտրոնացումների իր քաղաքականությանը, քննարկվող ժամանակաշրջանում ցարիզմի վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական քաղաքականությունը նպատակ ուներ ուժեղացնել երկրամասի ենթակայությունը Ռուսաստանին: Այդ քաղաքականությունը որոշակի փոփոխություններով շարունակվեց մինչև 1917 թ.: Վերոնշյալ շրջադարձային պատմաշրջանի ուսումնասիրությունը խիստ կարևոր և արդիական է պատմական դասերի, ինչպես նաև՝ անկողմնակալ դիրքերից այն արդի քաղաքական գործընթացներին ծառայեցնելու առումով:



*Нелли Багдасарян*

**ОСНОВНЫЕ АКЦЕНТЫ КАРАБАХСКОГО ВЕКТОРА  
ЗАКАВКАЗСКОЙ ПОЛИТИКИ РОССИЙСКОЙ ИМПЕРИИ  
В 1813-1917 ГГ.**

**Ключевые слова:** *Гюлистанский договор, Карабах, Россия, царизм, Закавказье, административная политика, Елизаветпольская губерния*

Оценивая суть политики царского правительства 1813-1917 гг., можно сделать следующий вывод: царизм остался верен своей политике недопущения этнической централизации. В изучаемый период осуществляемая государственная и социально-экономическая политика царизма в Карабахе ставила своей целью усиление подчинения края центральной власти России. Такая политика подчинения с определенными изменениями продолжалась до 1917г. Изучение поворотных моментов истории крайне важно и актуально и с точки зрения извлечения исторических уроков, и с точки зрения беспристрастной оценки событий прошлого с целью использования этих оценок для решения современных общенациональных задач.

*Nelly Baghdasaryan*

**THE MAIN EMPHASIS OF THE KARABAKH VECTOR OF THE  
RUSSIAN EMPIRE TRANSCAUCASIAN POLICY IN 1813-1917.**

**Key boards:** *Karabagh, Czarist, Administrative-Political Condition, Russia, Elisabethpol Governorate. administrative-political projects, Transcaucasia*

The examination of policy projects in Karabagh by the Czarist regime in 1813-1917 showed that the Czarist regime's commitment to its policy of avoiding ethnic concentrations, which was evidently manifested in Karabagh, where the hope of building an independent statehood was bright, while the unique proposals of uniting Karabagh and the Armenian district into one uniform administrative-political unit put forward in the projects remained only written, grounded exceptionally by geographical reasons. In fact, Czarist authorities taking into account their narrow interest-based policy did not unite Karabagh and the Armenian district into one uniform administrative unit. The aim of the political and economic policy implemented in Karabagh by the Czarist regime during the period idunder consideration was to enhance the district's domination to the central power. This biased policy continued with slight amendments till 1917. The investigation of the above-mentioned turning historical period is extremely important and up-to-date for historical lessons as well as serving it to the political processes from unbiased viewpoints.